

սեպութիւնները յեղաշրջել ձգտող տարօրինակ սիսեմով բացատրելու համար . փափագելի է որ մեր հայրենակիցը գտնէր օգնողներ այդ գրքի հրատարակութեանը համար :

ՕՐԻՈՐԴ Մ. ԲԱԲԱՅԵԱՆԻ

ԵՐԳԵՑՈՂՈՒԹԵԱՆ ԴԱՍԸՆԹԱՅՔԸ

Քանի մը ամէն է վեր օրերորդ Մ. Բաբայեան հիմնած է երգեցողութեան դասընթացք մը : Իրը երաժշտադէտ ու հայակաւոր երգչուհի է . իրը երգեցողութեան ներուճն ու փորձ ու սուցիչ . շատոնց է որ Օր. Բաբայեան պատուաւոր համբաւի մը տիրացած է Քրիստոսական արուեստագիտական շրջանակներուն մէջ . աւուր մանկէն պերճախօս ապացոյցներէն մին այն է որ այս նորահաստատ դասընթացքին իրենց հովանաւորութիւնը շնորհած են Տրպիսիի , Յօռէի , Վէնասն տիէնտիի պէս տիեզերահռչակ երաժիշտներ , Ժան Փերիէի պէս վարպետ երգիչ մը , եւ Ռոմէն Ռոյանի , Ժիւլիէն Թիէրսօի , Մառնուիի նման գիտուն երաժշտադէտներ :

Արեւմտեան երաժշտութեան մէջ . իր ունեցած նուրբ հմտութեան Օրիորդ Բաբայեան միացուց նաեւ հայկական ժողովրդական երգերու փափուկ ըմբռնումը՝ յորմենեան կոմիտաս վարպետին առաջնորդութեամբ այդ արուեստին եւս ընտելացաւ . եւ իր Փաթիզ եւ Լօնսոն տուած նուագահանդէսներուն մէջ՝ եւրոպական կտորներու իր ներաճաչակ երգող գնահատուելուն հետ՝ հայկական ժողովրդական երգերն ալ եւրոպացեաց ծանօթացուցած ու սիրցուցած է միշտ :

Իսկ իր անձնուրուիւթիւնը ղէպ ի հայկական ազգասիրական ձեռնարկներ կամ ղէպ ի երիտասարդ սխնակ հայրենակիցներ՝ այնքան մեծ է որքան իր արուեստագէտի դժուարահաճ խղճամտութիւնը . ու եւ ըստեսիրական երեկոյթ չէ եղած , ուր իր աշակցութիւնը յօժարակամ բերած չլրկայ . եւ օժտաւած չունեւոր հայ ուսանողներ որ պէտք ունեցած են իր

գասերուն , միշտ իր մօտ պտած են ամենէն ազնիւ օգնութիւնը . ողբացեալ Մառնուեանը , ինչպէս եւ Պ. Մանուկասեանը , իր երաժշտական անձնուէր աշակցութիւնը վախճած եւ անկից մեծապէս օգտուած են :

Այս դասընթացքի մանրամասնութեանց մասին տեղեկանալու համար պէտք է դիմել՝
Maison de Pianos Blondel, 28 Rue de Clichy

Armenia անգլիերէն ամսաթիւրթը զոր վերակազմայ Հնչակ . Կոստկցութիւնը հիմնեց՝ ամերիկեան եւ անգլիական հատարակութեանց ծանօթացնելու համար հայկական դասն ու քաղաքակրթութիւնը , այժմ մօտ երկու տարիէ ի վեր իր անձնական ջանքերով կը հրատարակէ Պ. Արշակ Տ. Մանուեան , եւ թիւերը որ իր տնօրէնութեամբ լոյս կը տեսնեն , պարունակութեամբ ճոխ եւ ալլաղան . օտար կարեւոր գրողներու աշխատակցութեամբ եւ հայ գրական գեղեցիկ էջերու թարգմանութիւններով զարդարուած , մեծապէս յաջող են : Ծանկալի է որ այդ թիւրթը , որուն օգտակարութիւնը աւելորդ իսկ է փաստել , դռնէր լուրջ աշակցութիւն ազգասէր Հայերու կողմէն եւ յարատեւէր :

Ճ Ա Ռ

ԱՐՏԱՍԱՆՈՒԱՄ

ՓՈՒ ՎԵՐԼԷՆԻ ՄԱՀՈՒԱՆ

ԺԶՊ ՏԱՐԴԱՐՁԻՆ ԱՌՔԻԻ

Փոլ Վերլէնի մահուընէն յետոյ իր հարցողները կազմեցին « Փոլ Վերլէնի բարեկամները » անուանով խմբակցութիւն մը , որուն անդամները ամէն տարի՝ մահուանը տարեդարձին օրը կ'երթային՝ եւ իրենց հետ կը հրաւրէին զալ Քրաուսցի եւ օտար գրասէրները՝ Վերլէնի գերեզմանին այցելութեան , եւ նոյն իրերունը կը հաւաքուէին հացկերոյթի մը մէջ :